

## ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՍԱԿԻԵՎԿԱ (ՂՈՆԵՑԿ) ԶԱՂԱՔՈՒՄ

*«Ով չարիք է գործում, ատում է լոյսը եւ չի գալիս դէպի լոյսը, որպէսզի նրա գործերը իր երեսովը յտան: Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դէպի լոյսը, որպէսզի նրա գործերը յայտնի լինեն, քէ Աստուծով կատարուեցին»:*

(ՀՈՒՎԳ. Գ 20-21)

Խաչվերացի գեղեցիկ ու խորհմաստ տունը կրկնակի նշանակությամբ էր իմաստավորվել Ուկրաինայի հայ համայնքի համար, որովհետեւ երկար սպասված երազն այդ օրն իրականությամբ էր կերպավորվել. Սակիեւկա քաղաքում վեր էր խոյացել գեղակերտ մի տաճար, որ դեպ իրեն էր կանչում հայ ժողովրդի հավատավոր այն զավակներին, ովքեր հանգամանքների բերումով իրենց երկրորդ հայրենիքը այդ քաղաքն էին դարձրել:

Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նաթան եպս. Գովհաննիսյանի հրավերքով, ինչպես նաեւ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Գայրապետի հատուկ կարգադրությամբ, սեպտեմբերի 12-ին Սակիեւկա մեկնեց Ամենայն Գայոց Կաթողիկոսի զավագանակիր եւ քարտուղար հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը՝ մասնակցելու տեղի Սուրբ Խաչ Մորակառույց եկեղեցու հանդիսավոր բացման եւ օծման արարողությանը:

Գայր Արտակն իր հետ տարել էր Վեհափառ Գոր պատգամը եւ երկու սրբատառ կոնդակներ, որոնցով երկու բարերարներին շնորհվում էր Գայաստանյայց եկեղեցու բարձրագույն պարգևներից մեկը՝ «Ա. Սահակ եւ Ա. Մեսրոպ» շքանշանը:

### Փոքրիկ անդրադարձ

Դեռեւս 1997 թվականին, տեղական իշխանությունների կողմից հայկական համայնքին հատկացված հողատարածության վրա, կատարվեց հիմնարկեք՝ ձեռամբ թեմի բարեխնամ առաջնորդ Նաթան Արքազանի: Գիմնարկեքից անմիջապես հետո, տեղաբնակ բարերարների գործնական աջակցությամբ ծավալվեցին շինարարական եռուն աշխատանքներ, որոնք իրենց լրմանը հասան ճիշտ մեկ տարի հետո: Այսինքն՝ վեր հանուեց եկեղեցու գեղեցիկ շենքը: Երկու բարերարների՝ Սուրեն Ասատրյանի եւ Եվգենի Վիովիչի միջոցներով իրականությամբ զգեստավորվեց տեղաբնակների վաղեմի երազանքը:

Նորակառույց եկեղեցին գտնվում է քաղաքի հյուսիսային մասում: Տաճարին կից կառուցվել են կիրակնօրյա դպրոց եւ երիցատուն: Գրեթե ողջ աշխատանքներն իրականացվեցին հայ վարպետների ձեռքով: Խաչածեւ կենտրոնազմբեթ նորակառույց այս տաճարը հարազատ է հայոց եկեղեցաշինական ավանդներին: Իր չափերով ոչ այնքան մեծ հավատի տանը եկեղեցական արարողություններին կարող են ներկա գտնվել շուրջ 30 հավատացյալներ:

Ասեմք նաեւ, որ Դոնեցկի մարզում, ուր 48 հազար հայեր են բնակվում, այս

եկեղեցին միակն է: Բացառիկ է այն հանգամանքը եւս, որ եկեղեցին այս տարածաշրջանում կառուցում են երկու ազգերի ներկայացուցիչները՝ հայ եւ ուկրաինացի՝ ի նշան երկու ժողովուրդների վաղեմի բարեկամության ու եղբայրության:

### *Լվացում եւ օծում*

Սեպտեմբերի 12-ի երեկոյան սկսվեց Սուրբ Խաչ եկեղեցու լվացումը՝ համաձայն նախնյաց սրբազան ծիսակարգի: Ըստ այդմ ողջ տաճարը լվացվեց սովորական քրով, ապա՝ գինով: Նույն երեկոյան նախ կատարվեց սրբապատկերների օծումը՝ ձեռամբ առաջնորդ սրբազան հոր: Իսկ հաջորդ օրը կատարվեց տաճարի եւ մյուս առարկաների օծումը: Հավուր պատշաճի զգեստավորված հոգեւորականաց դասը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի գլխավորությամբ, թափոր կազմած եւ «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի տաճարի գլխավոր դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն Մաշտոցի, ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ եւ համապատասխան սաղմոսներ:

Այս անույն կերպ մտնելով տաճար, դարձյալ Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ եւ շարականների երգեցողությամբ, ձեռամբ Նաթան Սրբազանի, կատարվեց տաճարի օծումը: Համաձայն Մաշտոց ծիսարանի, Սրբալույս Մյուռոնով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու սեղանը, չորս անկյունները, սյուները, դռները, իսկ վերջում՝ եկեղեցուն գործածվելիք կահ-կարասին:

Օծման համդիսավոր արարողությանը ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Պոնեցկի մարզխորհրդի նախագահ տիար Իվան Պոնոմարյովը, Մակիեւկայի քաղաքապետ տիար Աննաուտովը, նահանգապետարանի ներկայացուցիչներ: Հանդիսավոր արարողությանը ներկա էր Ուկրաինայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գ. Սիլվանյանը:

Հայաստանից ժամանել էր պաշտոնական պատվիրակություն՝ Ազգային ժողովի փոխնախագահ Յուրի Բախշյանի գլխավորությամբ: Պատվիրակության մաս էին կազմում ՀՀ նախագահի խորհրդական Արամ Սարգսյանը, արտգործնախարարության ԱՊՀ երկրների վարչության պետ Ռուբեն Ազիզբեկյանը, ԱԺ-ի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի եւ կրոնի հանձնախմբի նախագահ Արամ Մկրտչյանը, ԱԺ միջխորհրդարանական կապերի միջազգային բաժնի խորհրդական Ալեքսան Հարությունյանը, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը: Արարողությանը ներկա էին նաեւ Ուկրաինայի հայկական համայնքների նախագահները Կիեւից, Օդեսայից, Դրիմից, Լուգանսկից, Ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք, Ուկրաինայի տարածքում պաշտոնավարող քահանա հայրեր, ինչպես նաեւ մեծաթիվ հավատացյալ հայորդիներ, հյուրեր:

Հետարարողության եկեղեցու աստիճանավանդակին առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնությունն ու շնորհավորանքի խոսքերը հղեց ներկաներին, գնահատեց տեղական իշխանություններին իրենց հոգատար վերաբերմունքի համար, առանձնակի շեշտեց, որ ջանք ու եռանդ չեն խնայել՝ ավարտին հասցնելու եկեղեցու կառուցումը:

Այնուհետեւ Սրբազան Հայրը ներկայացրեց Հայրապետական պատվիրա-



կին եւ ապա իր շնորհակալանքի խոսքն ուղղեց Վեհափառ Դորը՝ հայրական հոգատարության ու վերաբերմունքի համար, որ մոտիկից տեղյակ լինելով եւ ուշի-ուշով հետեւելով եկեղեցու շինարարական աշխատանքներին, իր հատուկ գնահատանքն էր հայտնել բարերարներին, այնուհետեւ հրավիրեց Արտակ Դայր Սուրբին՝ ընթերցելու Դայրապետական Արքատառ կոնդակները եւ բարերարներին հանձնելու Վեհափառ Դոր կողմից ուղարկված Դայոց եկեղեցու շքանշանները:

Ապա շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Դոնեցկի մարզխորհրդի նախագահ տիար Իվան Պոնոմարյովը, Սակիւեկայի քաղաքապետ տիար Աննաուսովը, Աժ փոխխոսնակ Յուրի Բախշյանը:

Ընթերցվեց նաեւ Ուկրաինայի կրոնի գործերի պետական կոմիտեի նախագահ Վիկտոր Բոնդարենկոյի շնորհավորական ուղերձը:

Դանդիսավոր արարողության վերջում տեղի ունեցավ մատաղի օրհնություն եւ տրվեց սիրո ճաշ՝ ազապե:

Նույն օրը, երեկոյան, այդ ուրախալի առիթով տրվեց նաեւ պաշտոնական ճաշ, որի ընթացքում ներկա հյուրերին Ամենայն Դայոց Դայրապետի պատգամը փոխանցեց Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը եւ առաջնորդ Արքագանին հանձնեց Նորին Արքության կողմից որպէս նվեր ուղարկված պանակեն:

Դիրավի տոն էր Դայրենիքից հեռու բնակվող հավատավոր հայորդու համար, քանի որ նորած իր եկեղեցիով նա կրկին անգամ էր վերգտնում կորցրածը եւ, հավատարիմ մնալով նախնյաց հավատքին, նորովի էր քայլելու նրանց բացած շավղով՝ պահպանելով ավանդականը, աստվածապարգեւ պատվիրանները:

**ՄԱՐԻԱՄ ՎԱՐՂԱՆՅԱՆ**